Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2317419711, 2317417927, 2317394522, 2317389143, 2317346205 և 2317094357 որոշումները բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին

<<29>>___11___2023թ. 7-13- 12017 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ն.Սարգսյանս, վերանայելով Կարեն Մարտիրոսյանի ՄԴ/95112-23 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Ներքին Չարբախ 11 փողոցի 32 տան բնակիչ Կարեն Մարտիրոսյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2317419711, 2317417927, 2317394522, 2317389143, 2317346205 և 2317094357 որոշումները՝ նշելով, որ իրավախատումները կատարվել են այլ տրանսպորտային միջոցներով:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի խնդրանքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ իրավախախտման հատկանիշների պարզումը վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների համադրումն է իրավախախտման հատկանիշների հետ: Իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում, իսկ կասկածի դեպքում մեկնաբանվում է հօգուտ անձի:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2317419711, 2317417927, 2317394522, 2317389143, 2317346205 որոշումների մաս կազմող տեսանյութերի և լուսանկարների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներն անընթեռնելի են, ինչի հետևանքով հնարավոր չէ ապացուցել որոշումների հիմքում դրված փաստական հանգամանքը:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2317094357 որոշման իրավախախտում կատարած և դիմումատուի տրանսպորտային միջոցների նույնականացումը բացասական արդյունքի է հանգեցրել մասնավորապես՝ իրավախախտում կատարած տրանսպորտային միջոցը **AO836** հաշվառման համարանիշով, իսկ դիմումատուինը՝ **<<SUZUKI>>** մակնիշի է, **AD836** հաշվառման համարանիշով, ուստի վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելու մասին թիվ 2317094357 որոշումը տեխնիկական վրիպակի արդյունք է:

Այսպիսով, վարչական վարույթի ընթացքում հիմնավորվել է, որ վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2317419711, 2317417927, 2317394522, 2317389143, 2317346205 և 2317094357 որոշումները ենթակա են բեկանման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2317419711, 2317417927, 2317394522, 2317389143, 2317346205 և 2317094357 որոշումները բեկանել և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Կարեն Մարտիրոսյանին:

Ն.Սարգսյան

Կատարող՝ Ա.Սահակյան
Հեռ. 011544783